ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԺ կողմից առաջին ընթերցմամբ ընդունված «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի նախագծի (Կ-209-11.12.2017,19.12.2017-ՊԻՄԻ-017/1) վերաբերյալ ներկայացված առաջարկների

N	**Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը**	**Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը**	**Առաջարկությունը (փոփոխությունը, լրացումը)**	**Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը**	**Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը**
1.	ՀՀ ԱԺ «ԵԼՔ» խմբակցություն	Հոդված 13, մաս 4	Առաջարկվում է 13-րդ հոդվածի 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ « 4. Դատարանը նորմը պետք է կիրառի Սահմանադրական դատարանի կողմից իր որոշման եզրափակիչ և/կամ պատճառաբանական մասում(երում) այդ նորմի բացահայտված սահմանադրաիրավական բովանդակությամբ:»: Այլընտրանքային ձևակերպում՝ « 4. Դատարանը նորմը պետք է կիրառի Սահմանադրական դատարանի կողմից իր որոշման մեջ	**Չի ընդունվել:** Սահմանադրության 162-րդ հոդվածի համաձայն՝ արդարադատությունն իրականացվում է Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան:	

			այդ նորմի, այդ թվում՝ պատճառաբանական մասում, բացահայտված սահմանադրաիրավական բովանդակությամբ:»:		
2.	ՀՀ ԱԺ «ԵԼՔ» խմբակցություն	Հոդված 13	Առաջարկվում է 13-րդ հոդվածում ավելացնել 5-րդ մաս՝ հետևյալ բովանդակությամբ՝ « 5. Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի կամ մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության միջազգային մարմինների ակտերը պարտադիր են դատարանի համար՝ նշված ակտերով լուծված իրավունքի միևնույն հարցը քննելիս, բացառությամբ այն դեպքերի, երբ դատարանը ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ հիմնավորում է, որ տվյալ փաստական հանգամանքներից ելնելով իր կողմից քննվող գործով լուծման ենթակա իրավունքի հարցը տարբերվում է նշված ակտերով լուծված իրավունքի հարցից:»:	**Ընդունվել է մասնակի:** Սահմանադրությամբ ամրագրված նորմերը գործում են անմիջականորեն: Սահմանադրության 81-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ Սահմանադրությունում ամրագրված դրույթները մեկնաբանելիս հաշվի է առնվում Հայաստանի Հանրապետության վավերացրած՝	

				մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան: Այս դրույթն իր ամրագրումն է ստացել նաև Նախագծում:	
3.	ՀՀ ԱԺ «ԵԼՔ» խմբակցություն	Հոդված 51, մաս 1	Առաջարկվում է 10-րդ գլխի («Դատավորի գործունեության երաշխիքները») 51-րդ հոդվածի («Դատավորի անձեռնմխելիությունը») 1-ին մասից հանել՝ «կամ կարգապահական խախտման» բառերը:	**Չի ընդունվել:** Նշված դրույթը սահմանադրական նորմ է: Մասնավորապես, Սահմանադրության 164-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատավորը չի կարող պատասխանատվության ենթարկվել արդարադատություն իրականացնելիս հայտնած կարծիքի	

				կամ կայացրած դատական ակտի համար, բացառությամբ երբ առկա են հանցագործության կամ կարգապահական խախտման հատկանիշներ:	
4.	ՀՀ ԱԺ «ԵԼՔ» խմբակցություն	Հոդված 53, մաս 4	Առաջարկվում է 53-րդ հոդվածի 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ « 4. Եթե դատավորի պաշտոնից Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող միջազգային դատարանի դատավոր նշանակված դատավորի պաշտոնավարման ժամկետը լրացել է կամ օրենքով նախատեսվում է դատարանի կամ Վճռաբեկ դատարանի պալատի վերացում, ապա համապատասխան դատավորները համարվում են ռեզերվային, իսկ նրանց կարգավիճակը, այդ թվում՝ աշխատավարձը եւ հավելավճարներ	**Չի ընդունվել:** Առաջարկվող դրույթը «Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող միջազգային դատարանի դատավոր նշանակված դատավորի պաշտոնավարման ժամկետը լրացել է» մասով դուրս է սույն օրենսգրքի կարգավորման	

			ստանալու իրավունքը, առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկվելու կամ ընդգրկված մնալու իրավունքը պահպանվում են մինչեւ Սահմանադրությամբ սահմանված՝ դատավորի պաշտոնավարման տարիքը լրանալը, եթե սույն օրենսգրքով այլ բան նախատեսված չէ:»:	առարկայից, իսկ առաջարկվող դրույթի մնացած կարգավորումը Նախագծում առկա է:	
5.	ՀՀ ԱԺ «ԵԼՔ» խմբակցություն	Հոդված 54	Առաջարկվում է 54-րդ հոդվածում («Դատավորի աշխատավարձը և սոցիալական երաշխիքները») ավելացնել «4» մաս՝ « 4. Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող միջազգային դատարանի դատավորի պաշտունում պաշտոնավարման ժամկետը համարվում է դատավորի ստաժ:»: Հաջորդող մասերի համարները մեկով ավելացնել:	**Ընդունվել է:** Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	
6.	ՀՀ ԱԺ «ԵԼՔ» խմբակցություն	Հոդված 73, մաս 11	Առաջարկվում է 73-րդ հոդվածի 11-րդ մասում «Դատական տուգանքը կիրառվում է մինչեւ 100000 ՀՀ դրամի	**Ընդունվել է մասնակի:** Դատական	

			չափով:» բառերից առաջ լրացնել՝ « Դատական տուգանքը կիրառվում է դատավարությանը մասնակցող անձանց և փաստաբան, քննիչ, դատախազ չհանդիսացող ներկայացուցիչների նկատմամբ:» դրույթով:	տուգանքի վերաբերյալ կարգավորումները նախագծից հանվել են՝ հաշվի առնելով նաև ՀՀ ԱԺ պատգամավոր Հ. Թովմասյանի առաջարկն առ այն, որ դրանք պետք է ներառվեն համապատասխան դատավարական օրենսգրքերում:	
7.	ՀՀ ԱԺ «ԵԼՔ» խմբակցություն	Հոդված 149, մաս 1, կետ 1	Առաջարկվում է 18-րդ գլխի («Դատավորի կարգապահական պատասխանատվությունը») 149-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը՝ «1) արդարադատություն իրականացնելիս նյութական կամ դատավարական իրավունքի նորմի ակնհայտ և կոպիտ խախտումը.»՝ հանել:	**Չի ընդունվել:** Նախագծով հստակ և սպառիչ սահմանված են, թե որոնք են հանդիսանում նյութական կամ դատավարական իրավունքի նորմի ակնհայտ և կոպիտ խախտումները: Օրենքի	

				մեկնաբանությունը, փաստերի և ապացույցների գնահատումը հիմք չեն կարգապահական պատասխանատվության ենթարկելու համար: Բացի այդ, դատավորը ենթակա չէ կարգապահական պատասխանատվության մեղքի բացակայության դեպքում:	
8.	ՀՀ ԱԺ «ԵԼՔ» խմբակցություն	Հոդված 165, մաս 2, կետ 3	Առաջարկվում է 165-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի՝ «բացառությամբ մայրանալու հետ կապված դեպքերի» բառերը փոխարինել՝ «բացառությամբ հետծննդյան արձակուրդում գտնվելու հետ կապված դեպքերի» բառերով:	**Չի ընդունվել:** «Հետծննդյան արձակուրդ» առաջարկվող եզրույթն ամրագրելու պարագայում անհարկի սահմանափակվելու են բացառությամբ սահմանվող դեպքերը:	

				«Մայրություն» եզրույթը սահմանադրական է, իսկ Նախագծով առաջարկվող դեպքերը վերաբերում են ինչպես հղիության, այնպես էլ ծննդաբերության ժամանակահատված ներին: Բացի այդ, Հայաստանի Հանրապետության աշխատանքայի օրենսգրքի 176-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ աշխատողի պահանջով չվճարվող արձակուրդ տրամադրվում է հղիության և	

				ծննդաբերության արձակուրդում գտնվող, ինչպես նաև մինչև մեկ տարեկան երեխային խնամելու համար արձակուրդում գտնվող կնոջ ամուսնուն:	
9.	ՀՀ ԱԺ պատգամավոր Հրայր Թովմասյան	Գլուխ 12	Առաջարկվում է Նախագծից հանել դատական տուգանքին վերաբերող կարգավորումները՝ դրանք հետագայում նախատեսելով առանձին դատավարական օրենքներով:	**Ընդունվել է:** Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:	
10.	ՀՀ ԱԺ պատգամավոր Հրայր Թովմասյան	Գլուխ 14	Առաջարկվում է վերանայել Բարձրագույն դատական խորհրդի անդամի՝ Ընդհանուր ժողովի կողմից ընտրության կարգը՝ ապահովելու համար անդամների բավարար ներկայացվածությունը կապված, սեռից, մասնագիտացումից, և դատական ատյանից:	**Ընդունվել է:**	
	ՀՀ կառավարություն	«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք»	Առաջարկվում է «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական	Նախագիծը ներկայացվում է նոր խմբագրությամբ: (Տե՛ս նախագծի	

		Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի նախագիծ	օրենքի նախագիծը շարադրել նոր խմբագրությամբ:	փաթեթին կից ներկայացված տեղեկանքը):	
11.	ՀՀ կառավարություն	«Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենք	Առաջարկվում է փաթեթում ներառել «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի նախագիծը:	Ներկայացվել է համապատասխան նախագիծը:	